ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՌԱՎՏՐԻ և ՏՆՏԵՍԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՄՏԱՎՈՐ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹՅԱՆ ԲՈՂՈՔԱՐԿՄԱՆ ԽՈՐՀՐԴԻ

ՈՐՈՇՈՒՄ

№1/08

Քաղ. Երևան **30 հունվարի 2008թ.**

Հայաստանի Հանրապետության առևտրի և տնտեսական զարգացման նախարարության մտավոր սեփականության գործակալության բողոքարկման խորհուրդը (այսուհետ՝ բողոքարկման խորհուրդ) հետևյալ կազմով՝ խորհրդի նախագահ Ա.Ֆ.Ազիզյան, անդամներ՝ Ա.Ս.Խաչիկյան, Բ.Շ. Վարդանյան, Գ.Հ.Ադամյան, Ա.Ա.Տոնիկյան և Ա.Վ.Բաբայան, իր 2008թ. հունվարի 30-ի նիստում (արձանագրություն № 57/1) քննարկեց «Ինտերնեյշնլ Մասիս Տաբակ» ՍՊԸ-ի 2007թ. հոկտեմբերի 10-ի դիմումը Զիփո Մենյուֆեքչրինգ Քամփնի (US) ընկերության «ZIPPO» (ՀՀ վկ.դ2931) ապրանքային նշանի գրանցման գործողությունը չօգտագործման պատճառով ԱԾՄԴ-ի 4 և 34-րդ դասերի ապրանքների համար վաղաժամկետ դադարեցնելու խնդրանքով:

Դիմողի փաստարկները հետևյալն են:

Դիմողը դիմումում նշել է, որ «Ինտերնեյշնլ Մասիս Տաբակ» ՍՊԸ-ի կողմից Երևան քաղաքում և Հայաստանի Հանրապետության մի շարք մարզերում կատարված մարքեթինգային ուսումնասիրությունների արդյունքում պարզվել է, որ «ZIPPO» (ՀՀ վկ.դ2931) ապրանքային նշանն իր անվամբ գրանցած Զիփո Մենյուֆեքչրինգ Քամփնի (US) ընկերությունը գրանցման թվականից սկսած այն չի օգտագործել և չի օգտագործում ԱԾՄԴ-ի 4 և 34-րդ դասերում գրանցված ապրանքների համար ավելի քան 5 տարի և հիմք ընդունելով «Ապրանքային և սպասարկման նշանների, ապրանքի ծագման տեղանունների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ նաև օրենք) 22-րդ հոդվածի 4-րդ մասը, խնդրել է «ZIPPO» (ՀՀ վկ.դ2931) ապրանքային նշանի գրանցման գործողությունը վաղաժամկետ դադարեցնել ԱԾՄԴ-ի 4 և 34-րդ դասերի ապրանքների համար:

Ի լրումն 10.10.2007թ դիմումի «Ինտերնեյշնլ Մասիս Տաբակ» ՍՊԸ-ն 15.01.2008թ բողոքարկման խորհուրդ է ներկայացրել իրենց դիրքորոշումը ապրանքային նշանի օգտագործման մասին բերված փաստարկների վերաբերյալ:

Դիմողը նշել է, որ նախ ներկայացված հաշիվ-ապրանքագրերը կազմված և ձևակերպված չեն օրենքով սահմանված կարգով՝ պատշաճ ստորագրված և կնքված չեն, հղում կատարելով ՀՀ կառավարության 1998թ օգոստոսի 25-ի թիվ 525 որոշմամբ հաստատված «Նյութական ու ոչ նյութական ակտիվների, ապրանքանյութական պաշարների ձեռքբերման ծախսերը հիմնավորող փաստաթղթերի նկատմամբ ներկայացվող պահանջների սահմանման և այդ փաստաթղթերի կազման կարգի» (այսուհետ տեքստում՝ կարգ) 1-ին կետին: Երկրորդ, հղում կատարելով կարգի 7-րդ կետին նշել է, որ ծախսերը հիմնավորող հաշվարկային փաստաթղթերը կազմվում են առնվազն երկու օրինակից, որոնք պետք է լինեն նույնական կնքված կամ դրոշմակնքված ու ստորագրված, որի մեկ օրինակը պետք է լինի ապրանքն առաքողի, իսկ մյուս օրինակը ապրանքն ստացող հարկ վճարողի մոտ, և եթե ընկերությունը առաքած լիներ ներկայացված հաշիվ-

ապրանքագրերում թվարկված ապրանքները, ապա պարտադիր կունենար նաև օրենքով սահմանված կարգով կնքված և ստորագրված համապատասխան փաստաթղթեր: Դիմողը նշել է նաև, որ ապրանքն արտահանելուց համապատասխան մաքսային մարմնում կատարվում է արտահանման ձևակերպումներ և տրվում արտահանումն հավաստող փաստաթղթեր, որոնք լինելու դեպքում անպայման կներկայացվեին բողոքարկման խորհրդին:

Ինչպես նաև դիմողը նշել է, որ ըստ հաշիվ-ապրանքագրերի ապրանքն ստացողն է «Ֆիլիպ Մորիս Մենեջմենտ Սերվիս Բ.Վ.» ընկերության հայաստանյան ներկայացուցչությունը, որը ՀՀ ձեռնարկությունների գրանցման պետական ռեգիստրում, հարկային և մաքսային մարմիններում գրանցված է որպես «Ֆիլիպ Մորիս Ինտերնեյշնլ» ընկերության ներկայացուցչություն, որը որևէ ապրանք չի ներմուծում: Դիմողը նշել է նաև, որ հիմք ընդունելով Զիփո Մենյուֆեքչրինգ Քամփնի (US) ընկերության վեբ կայքը, հաստատապես կարող ենք նշել, որ «Ֆիլիպ Մորիս Մենեջմենտ Սերվիս Բ.Վ.» ընկերության հայաստանյան ներկայացուցչությունը որևէ կապ չունի Զիփո Մենյուֆեքչրինգ Քամփնի (US) ընկերության հետ, նշելով նաև որ Զիփո Մենյուֆեքչրինգ Քամփնի (US) ընկերությունը Հայաստանի Հանրապետությունում չունի որևէ ներկայացուցիչ, ագենտ, դիստրիբյուտոր, ներկրող և այլն:

«Ինտերնեյշնլ Մասիս Տաբակ» ՍՊԸ-ն ելնելով դիմումից և ի լրումն ներկայացված գրությունից ու հիմք ընդունելով ՀՀ քաղաքացիական օրենսգրքի, ՀՀ Հարկերի մասին օրենքի, ՀՀ Մաքսային օրենսգրքի, ՀՀ Ապրանքային և սպասարկման նշանների, ապրանքի ծագման տեղանունների մասին օրենքի, ՀՀ կառավարության 1998թ օգոստոսի 25-ի թիվ 525 որոշմամբ հաստատված «Նյութական ու ոչ նյութական ակտիվների, ապրանքանյութական պաշարների ձեռքբերման ծախսերը հիմնավորող փաստաթղթերի նկատմամբ ներկայացվող պահանջների սահմանման և այդ փաստաթղթերի կազման կարգի» համապատասխան հոդվածները խնդրել է Զիփո Մենյուֆեքչրինգ Քամփնի (US) ընկերության ներկայացուցչի կողմից ներկայացված փաստաթղթերը հիմք չընդունել և դիմումը բավարարել: Դիմողը կից ներկայացրել է Զիփո Մենյուֆեքչրինգ Քամփնի (US) ընկերության վեբ կայքից տեղեկություններ:

Զիփո Մենյուֆեքչրինգ Քամփնի (US) ընկերության ներկայացուցիչ Է.Նահապետյանը 21.12.2007թ և 29.01.2008թ գրություններին կից ներկայացրել է 2003թ մարտ-ապրիլ ամիսներին ապրանքային նշանի օգտագործումը հաստատող փաստաթղթեր, այն է, ապրանքի որակի և ծագման փաստաթղթեր ընդհանուր թվով 8 էջ, երկու հաշիվ ապրանքագիր, «INVOICE» հաշիվ-ապրանքագրեր ընդհանուր թվով 3 էջ, բեռնափոխադրման փաստաթղթեր ընդհանուր թվով 3 էջ, առուծախի պայմանագիր: Ներմուծվող ապրանքի արժեքի ընդհանուր գումարը 11186 ԱՄՆ դոլար:

Դիմումում բերված հիմնավորումների շրջանակներում քննարկելով դիմումը, Բողոքարկման խորհուրդը պարզեց հետևյալը՝

«ZIPPO» (ՀՀ վկ.դ2931) ապրանքային նշանը գրանցվել է 10.03.1998թ ԱԾՄԴ 4 և 34 դասի վառիչներ ապրանքների համար: «Ապրանքային և սպասարկման նշանների, ապրանքի ծագման տեղանունների մասին» ՀՀ օրենքի 22-րդ հոդվածի 4-րդ մասի համաձայն «Ապրանքային նշանի գրանցման գործողությունը կարող է ցանկացած անձի դիմումի հիման վրա, բողոքարկման

խորհրդի որոշմամբ, դադարեցվել վաղաժամկետ բոլոր ապրանքների, որոնց համար այն գրանցված է, կամ դրանց մի մասի նկատմամբ, եթե ապրանքային նշանի գրանցման թվականից հաշված 5 տարվա ընթացքում կամ դիմումն ավելի ուշ ներկայացնելու դեպքում՝ դրան անմիջականորեն նախորդող 5 տարվա ընթացքում այն ընդհանրապես չի օգտագործվել կամ օգտագործվել է ոչ ողջամիտ ծավալներով ապրանքային նշանի սեփականատիրոջ կամ սույն օրենքի 26-րդ հոդվածի համաձայն՝ լիցենզային պայմանագրով այդ իրավունքն ունեցող անձի կողմից: Ապրանքային նշանի օգտագործման ապացույցները ներկայացնում է դրա սեփականատերը, կամ լիցենզային պայմանագրով տվյալ նշանի օգտագործման իրավունք ունեցող անձը:», օրենքի 22-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն «Ապրանքային նշանի օգտագործում է համարվում դրա զետեղումն այն ապրանքների վրա, որոնց համար գրանցված է ապրանքային նշանը, և(կամ) դրանց փաթեթավորման վրա»:

Ապրանքային նշանի սեփականատիրոջ կողմից ներկայացված փաստաթղթերը հիմնավորում են ապրանքային նշանի օգտագործումը 2003թ մարտ-ապրիլ ամիսներին, ինչպես նաև հաշվի առնելով որ «ZIPPO» (ՀՀ վկ.դ2931) ապրանքային նշանով մակնշված կրակվառիչների արժեքը տատանվում է 8 ԱՄՆ դոլարից մինչև 1191 ԱՄՆ դոլար գնի միջև, ապա այն չի կարելի համարել լայն սպառման ապրանք, հետևաբար հաշիվ ապրանքագրերով ներկայացված «ZIPPO» (ՀՀ վկ.դ2931) ապրանքային նշանով մակնշված կրակվառիչների քանակը կարելի է համարել ողջամիտ ծավալներով օգտագործում: Ինչպես նաև ներկայացված փաստաթղթերը պատշաճ ստորագրված և/կամ կնքված են:

Հաշվի առնելով նիստում դիմումի ըստ էության քննարկման արդյունքները և այն փաստը, որ օրենքի 22-րդ հոդվածի 4-րդ մասի 1-ին պարբերության համաձայն Զիփո Մենյուֆեքչրինգ Քամփնի (US) ընկերությունը ներկայացրել է համապատասխան ապացույցները «ZIPPO» (ՀՀ վկ.դ2931) ապրանքային նշանը Հայաստանի Հանրապետությունում դիմումին նախորդող 5 տարվա ընթացքում օգտագործելու վերաբերյալ, բողոքարկման խորհուրդը գտնում է, որ ներկայացված ապացույցները հիմնավորում և ապացուցում են «ZIPPO» (ՀՀ վկ.դ2931) ապրանքային նշանի օգտագործման փաստը Հայաստանի Հանրապետությունում, և «Ինտերնեյշնլ Մասիս Տաբակ» ՍՊԸ-ի դիմումը՝ «ZIPPO» (ՀՀ վկ.դ2931) ապրանքային նշանի գրանցման գործողությունը չօգտագործման պատճառով ԱԾՄԴ-ի 4 և 34 դասի ապրանքների համար վաղաժամկետ դադարեցնելու խնդրանքով, ենթակա է մերժման:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով օրենքի 22-րդ հոդվածի 4-րդ մասով, «Հայաստանի Հանրապետության առևտրի և տնտեսական զարգացման նախարարության մտավոր սեփականության գործակալության բողոքարկման խորհուրդ բողոքների և դիմումների ներկայացման և քննարկման կարգի» 79-րդ կետի «բ» ենթակետով, բողոքարկման խորհուրդը

Ո Ր Ո Շ Ե Ց

Մերժել «Ինտերնեյշնլ Մասիս Տաբակ» ՍՊԸ-ի 2007թ. հոկտեմբերի 10-ի դիմումը և Զիփո Մենյուֆեքչրինգ Քամփնի (US) ընկերությանը պատկանող «ZIPPO» (ՀՀ վկ.դ2931) ապրանքային նշանի գրանցման գործողությունը թողնել ուժի մեջ:

Բողոքարկման խորհրդի որոշումը կարող է օրենքով սահմանված կարգով բողոքարկվել դատարանում:

Բողոքարկման խորհրդի
նախագահ Ա.Ազիզյան